ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Մարտի 26—27-ը ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ հանրապետության գիտությունների ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովը, որը քննարկեց ակադեմիայի 1974 թ. աշխատանքի արդյունքները և այն խնդիրները, որ գիտնականները լուծելու են հնգամյակի եզրափակիչ տարում։

Ժողովը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։ Նա ասաց, որ 1974 թ. ակադեմիական հիմնարկները կարևոր աշխատանքներ են կատարել՝ մասնակցելով, մասնավորապես, տիեզերական հետազոտությունների անցկացմանը և դրանց արդյունքների մշակմանը, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի համար նոր նյութերի ստեղծմանը։ Բյուրականի աստղադիտարանում ավարտված է նոր հեռադիտակի մոնտաժումը, որի հայելու տրամագիծը 2,6 մետր է։ Հանրապետության կյանքում մեծ իրադարձություն էր Հայկական սովետական հանրագիտարանի առաջին հատորի լույս ընծայումը։ Միաժամանակ Վ. Համբարձումյան ընդգծեց, որ ակադեմիայի առջև դեռևս չլուծված շատ պրոբլեմներ են կանգնած. բոլոր ինստիտուտներում և լաբորատորիաներում չէ, որ հետազոտությունների մակարդակը համապատասխանում է այսօրվա պահանջներին, դրանց աշխատակիցները քիչ են հոգ տանում իրենց որակավորումը բարձրացնելու, գիտելիքները հարստացնելու և մտահորիզոնն ընդլայնելու մասին, բավականաչափ շահագրգռվածություն չեն ցուցաբերում գիտական նախագծումները պրակտիկայում ներդնելու հարցում։

Այնուհետև պրեզիդենտը խոսեց այն մասին, որ վերջին տարիներին զգալիորեն ամրապնդվել է հանրապետության գիտական հիմնարկների կապը մինիստրությունների և գերատեսչությունների հետ։ Տարեցտարի ընդլայնվում են նաև ակադեմիայի միջազգային կապերը. հայ գիտնականները գիտական սերտ համագործակցություն են հաստատել մի շարք արտասահմանյան երկրների հետազոտական կենտրոնների հետ։

Պրեզիդենտի ներածական խոսքից հետո մի խումբ գիտնականների հանձնվեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևները՝ Մեծարման գրերը, Վաստակագրերը և Գովեստագրերը։

Ընդհանուր ժողովում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գործունեության 1974 թ. հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ակադեմիայի նախագահության գլխավոր գիտական քարտուղար, ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Ա. Բակունցը։ Նա հանգամանորեն անդրադարձավ ակադեմիայի նախագահության, նրա բաժանմունքների, գիտական խորհուրդների և հանձնաժողովների աշխատանքին, գիտական հետազոտությունների պլանավորման և մոտակա տարիներին դրանց արդյունքները պրակտիկայում ներդնելու, ինչպես նաև Հայաստանի բնության պահպանության ու ռացիոնալ օգտագործման հետ կապված խնդիրներին։ Վերջում նա խոսեց կադրերի պատրաստման, գիտական նստաշրջանների, կոնֆերանսների և գիտաժողովների կազմակերպման հետ կապված հարցերի մասին։

Զեկուցման շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ Ա. Բ. Նալբանդյանը, Ծ. Պ. Աղայանը, Հ. Գ. Մաղաքյանը և Ա. Գ. Նազարովը, թղթակից-անդամներ Ս. Հ. Վարդանյանը և Գ. Ա. Գալոյանը։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ ընդհանուր ժողովում ընտրություններ անցկացվեցին։ Չորս տարի ժամկետով ակադեմիայի պրեզիդենտ վերընտրվեց ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը։

Ընդհանուր ժողովի եզրափակիչ նիստում կենդանական աշխարհի էվոլյուցիայի տարբեր փուլերում գլխուղեղի զարգացման հարցերին նվիրված զեկուցումով հանդես եկավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ի. Քարամյանը։

Գիտությունների ակադեմիայի բաժանմունք-

ների նիստերում, որոնք տեղի ունեցան մարտի 24—25-ը, քննարկվեցին բաժանմունքների գիտական հիմնարկների 1974 թ. գործունեության հիմնական արդյունքները։

Ակադեմիայի տարեկան ժողովին մասնակցում էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը, Հանրապետության Կերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, Կենտկոմի քարտուղարներ Ս. Թովմասյանը և Հ. Ոսկանյանը, ՀԿԿ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը։

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ